Արձանագրություն N 2

(ՀՀ ԿԳՄՄՆ <<Վանաձորի Գրիբոյեդովի անվան հ.11 ավագ դպրոց >>ՊՈԱԿ մանկավարժական խորհրդի նիստը գումարվել է 2021թ.հոկտեմբերի 1-ին)

Նիստին մասնակցում են մանկավարժական խորհրդի 33 անդամներից 25-ը (քսանհինգը), բացակա՝ 8 (ութ), հարգելի 8 (ութ):

Նիստին մասնակցում է տնօրենի հավակնորդ՝ Նարինե Ալբերտի Սահակյանը (առցանց):

Օրակարգում՝

1.Զարգացման ծրագրի քննարկում /զեկուցող՝ հավակնորդ/:

2.Հաստատության տնօրենի թեկնածուի ընտրություն / նախագահ՝ Ն. Ա. Սահակյան/:

Լսեցին.

- ✓ Հավակնորդ Ն.Սահակյանը ներկայացրեց զարգացման ծրագիրը, ապա կազմակերպվեց քննարկում:
- ✓ Մանկավարժական խորհրդի նախագահ՝ Ն. Ա. Սահակյանը առաջարկեց կազմակերպել փակ, գաղտնի քվեարկություն:

Ի կատարումն <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության ընտրության կարգը>> հաստատելու մասին ՀՀ Կառավարության 04.03.2010թ. N 319-Ն որոշման հավելվածի 15-րդ կետի պահանջների հաստատության մանկավարժական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել քվեարկության արդյունքները՝

Նարինե Ալբերտի Սահակյան կողմ՝ 25 /քսանհինգ/ ձայն, դեմ՝ 0 /զրո/ձայն:

2. Նարինե Ալբերտի Սահակյանին համարել ՀՀ ԿԳՄՄՆ <<Վանաձորի Գրիբոյեդովի անվան հ.11 ավագ դպրոց >>ՊՈԱԿ-ի տնօրենի մանկավարժական խորհրդի թեկնածու:

Մանկավարժական խորհրդի նախագահ՝ Ն. Ա. Սահակյանը

Քարտուղար՝ Ռ. Բոշյան